

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐՏԱՏՈՒՄԸ ԶՅԱՅԱՏՈՒՄԸ ԶՅ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

Նարինե ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի ասպիրանտ

Բանալի բառեր. բանկ, պանելային տվյալ, արդյունավետություն, չբաշխված շահույթ, բանկային կապիտալ, ակտիվներ

Գլոբալացումը և ինտեգրումը ժամանակակից տնտեսական զարգացման կարևորագույն ուղղություններն են: Ընդ որում, այսօր արդեն դժվար է խոսել գլոբալ տնտեսությանը ազգային տնտեսությունների ինտեգրման մասին, եթե երկրի ֆինանսաբանկային համակարգը չի համապատասխանում միջազգային շուկայի պահանջներին և եթե ֆինանսական կառույցները ի վիճակի չեն իրականացնել գլոբալ մասշտաբով տնտեսության նորմալ գործունեության համար անհրաժեշտ միջազգային գործարքներ:

Տնտեսական զարգացման այս գործընթացներից մեկուսացված չէ նաև ՀՀ ֆինանսաբանկային համակարգը, սակայն Հայաստանը հիմնականում ազդեցություն կրողի, այլ ոչ թե ազդեցության գոտի ստեղծողի կարգավիճակում է, և որպեսզի ավելի ճիշտ կարողանանք մեկնաբանել ՀՀ առևտրային բանկերի ու բանկային համակարգի վիճակը, դիտարկենք այն միջազգային բանկային համակարգին ինտեգրման և արտասահմանյան կապիտալի արդյունավետության տեսանկյունից:

Վերլուծության շրջանակներում նպատակահարմար ենք համարել դիտարկել առևտրային բանկերի կապիտալի, չբաշխված շահույթի ու ակտիվների միջև եղած կապերը: Եվ այդ նպատակով ՀՀ առևտրային բանկերը խմբավորվել են ըստ բանկի կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության առկայության: Ըստ այդմ Հայաստանում գործող 21 առևտրային բանկերից միայն 4 բանկի (Արարատ բանկ, Բիբլոս բանկ Արմենիա, Ինտերբանկ և Հայէկոնոմբանկ) կապիտալում է առկա միջազգային ֆինանսական կազմակերպության ուղղակի նշանակալի մասնակցություն:

ՀՀ բանկային համակարգում գործող բանկերից էյչ Էս Բի Սի բանկը, Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկը և Պրոկրեդիտ բանկը առանձնանում են նրանով, որ կապիտալում ուղղակի նշանակալի մասնակցություն ունեն խոշոր արևմտյան բանկերը: Նշված բանկերից բացի ՀՀ բանկային համակարգում

մնացած 14 բանկերը ռուսական կամ տեղական կապիտալի վրա կառուցված բանկեր են:

Վերլուծությունն առավել ամբողջական դարձնելու և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բանկային համակարգի ինտեգրման բնութագրման համար վերջին 14 բանկերի խմբից էլ առանձնացվել են ռուսական և դազախական կապիտալով աշխատող ՎՏԲ Հայաստան բանկը, Առքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբը և ԲՏԱ բանկը:

Վերլուծության շրջանակներում առանձին-առանձին անդրադարձ է կատարվել 7, 14 և 3 բանկերի կապիտալ-շահույթ և ակտիվ-շահույթ կապին, որով փորձել ենք գնահատել, թե դիտարկվող ժամանակահատվածի համար որքանով են արդյունավետ գործում արևմտյան կապիտալ ունեցող բանկերը ռուսական կամ տեղական կապիտալով բանկերի համեմատ:

Առավել արժանահավատ արդյունքներ ստանալու համար վերլուծությունը կատարվել է ոչ թե սովորական ժամանակային շարքերով (որոնք բնութագրում են ստանդարտ կախվածություններ), այլ պանելային տվյալների, որոնք հնարավորություն են տալիս վերլուծությունը կատարել դինամիկայի մեջ և փոփոխվում են միաժամանակ ըստ ժամանակի և ըստ այլ գործոնների: ՀՀ առևտրային 7, 14 և 3 բանկերի համար ներկայացված են պանելային տվյալներ հետևյալ ձևով`

- յուրաքանչյուր բանկի համար ներկայացված են ակտիվների, կապիտալի և չբաշխած շահույթի տվյալները,
- ակտիվների, կապիտալի և չբաշխված շահույթի տվյալները ներկայացված են եռամսյակային ցուցանիշներով 2012-2014թթ. համար¹:

Պանելային տվյալներով իրականացվող հաշվարկները հնարավորություն են տալիս ստանալ մի մոդել, որի միջոցով կարելի է գնահատել ակտիվ-չբաշխված շահույթ, կապիտալ-չբաշխված շահույթ կապը ըստ առանձին բանկերի և ըստ դիտարկվող ժամանակահատվածի: Ընդ որում, պանելային մեթոդը հնարավորություն է տալիս գնահատել անկախ փոփոխականը միաժամանակ թե ըստ ժամանակային, և թե ըստ գործոնային մոտեցման: Պանելային մեթոդով հաշվարկման ժամանակ մոդելներն ունեն հետևյալ տեսքը`

¹ Հաշվարկների համար ցուցանիշները վերցվել են առանձին առևտրային բանկերի կողմից հրապարակված հաշվետվություններից

$$Y = \alpha + \beta * X + \epsilon;$$

որտեղ

Y-ը՝ մոդելի անկախ փոփոխականն է (չբաշխված շահույթ),

X-ը՝ մոդելի կախյալ փոփոխականն է (ակտիվ կամ կապիտալ),

β-ն՝ հաշվարկային գործակիցն է կամ սահմանային հակվածության գործակիցն է, որը ցույց է տալիս, թե այլ հավասար պայմաններում X-ի մեկ միավոր փոփոխման արդյունքում ինչքան միավորով կփոփոխվի Y-ը,

α-ն՝ մոդելի ազատ անդամն է, որ ցույց է տալիս թե բացի կախյալ փոփոխականներից մոդելի մեջ չընդգրկված մնացած բոլոր հնարավոր փոփոխականները գումարային ինչ ազդեցություն ունեն անկախ փոփոխականի վրա,

ε-ը՝ մոդելի սխալն է կամ մոդելի մնացորդը, որը ցույց է տալիս անկախ փոփոխականի փաստացի և հաշվարկային ցուցանիշների տարբերությունը:

Մոդելը գնահատվում 4 տարբեր իրավիճակներում՝ պայմանով, որ մոդելի ազատ անդամը

- ֆիքսված է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ,
- ֆիքսված է նշված 7, 14 կամ 3 բանկերի դիտարկման ժամանակ,
- տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ,
- տատանվում է ֆիքսված է նշված 7, 14 կամ 3 բանկերի դիտարկման ժամանակ:

Ֆիքսված էֆեկտի հաշվարկման ժամանակ հաշվարկային արժեքների վիճակագրորեն նշանակալիության ստուգման համար կիրառվում է հավանականության գործակիցը: Տատանման էֆեկտի հաշվարկման ժամանակ հաշվարկային արդյունքների վիճակագրորեն նշանակալիությունը ստուգելու համար կիրառվում է Չաուսմանի թեստը:

Տարբերակված 7, 14 և 3 բանկերի համար մոդելավորվել են կապիտալ-չբաշխված շահույթ և ակտիվ-չբաշխված շահույթ կապերը: Յուրաքանչյուր մոդել հաշվարկվել է 4 անգամ, իսկ արդյունքները ստուգվել են վերը նշված համապատասխան թեստերով:

Ընդհանուր առմամբ գնահատվել է 24 մոդել: Արդյունքում՝ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող 33 7 բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում, երբ մոդելի ազատ անդամը տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ, գրանցվեցին վիճակագրորեն նշանակալի արդյունքներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները²

Ակտիվ -Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ	0.001809	2.243208	410769.7	2.214058
Կապիտալ-Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Կապիտալ	0.000826	2.050934	579831.6	2.877306

Մոդելի նման արդյունքը ցույց է տալիս, որ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համար ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 1.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 0.8 դրամով:

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար հաշվարկված կապիտալ-չբաշխված շահույթ մոդելում դիտարկվող ժամանակահատվածի համար ևս գրանցվեց վիճակագրորեն նշանակալի արդյունք: Նույնը կարելի է ասել նաև ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում: Այստեղ ևս գրանցվեց վիճակագրորեն նշանակալի արդյունք:

Աղյուսակ 2. Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները³

Ակտիվ -Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ	0.004396	9.320733	-112076.6	-1.595529
Կապիտալ-Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Կապիտալ	0.041201	11.78637	-399681.8	-5.086183

² Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

³ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

Աղյուսակ 2-ից երևում է, որ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 4.3 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 41.2 դրամով: Միայն ռուսական և դազախական կապիտալով գործող ՀՀ 3 բանկերի համար ևս վիճակագրորեն նշանակալ արդյունքներ գրանցվեցին թե՛ կապի-տալ-չբաշխված շահույթ մոդելում, և թե՛ ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում (աղյուսակ 3), երբ մոդելի ազատ անդամը ֆիքսված է:

Աղյուսակ 3. Ռուսական և դազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները⁴

Ակտիվ -Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ	0.003857	4.384630	-233262.1	-1.660543
Կապիտալ-Չբաշխված շահույթ մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Կապիտալ	0.030476	4.468292	-308725.5	-2.051553

Աղյուսակ 3-ի արդյունքները ցույց են տալիս, որ ռուսական և դազախական կապիտալով գործող ՀՀ 3 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 3.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 30.4 դրամով: Հաշվարկային արդյունքները համադրելուց հետո հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

- Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար ակտիվների միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 2.43 անգամ,

- Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար կապիտալի միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 49.88 անգամ:

⁴ Հաշվարներն իրականացվել են հեղինակի կողմից:

- Ռուսական և դազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար ակտիվների միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի նույն ցուցանիշը 2.11 անգամ,

- Ռուսական և դազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար կապիտալի միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի նույն ցուցանիշը 38 անգամ:

Ստացված արդյունքները վկայում են, որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալով գործող ՀՀ 14 բանկերը մի քանի անգամ ավելի արդյունավետ են գործում, քան կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերը: Նման իրավիճակի պատճառը մեր կարծիքով հետևյալն է՝

- Հաշվի առնելով որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար կապիտալ/չբաշխված շահույթ հարաբերակցությունը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 49.88 անգամ, պետք է փաստել, որ ՀՀ բանկային համակարգում հիմնական վարկավորումը իրականացվել է ոչ թե փոխառու միջոցների հաշվին այլ սեփական կապիտալի, սեփական ռեսուրսների հաշվին:

- Սեփական ռեսուրսների հաշվին իրականացվող վարկավորումը միջնաժամկետ հեռանկարում թանկացնելու է փողի գինը և եթե ՀՀ տնտեսության մեջ նոր ներդրումներ չլինեն, հանգեցնելու է ֆինանսական ճգնաժամի:

Ամփոփելով վերը ասվածը կարող ենք փաստել, որ ստացված հաշվարկային արդյունքները ցույց են տալիս կարճաժամկետ հեռանկարում կապիտալ/չբաշխված շահույթի բարձր ցուցանիշ, սակայն նման բարձր ցուցանիշը ի համեմատ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ բանկերի վկայում է բանկային համակարգում վարկավորման հիմնական աղբյուրի՝ սեփական ռեսուրսների հիման վրա վարկեր տրամադրելու մասին: Նման իրավիճակը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնելու է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ բանկերի կլանման կամ միաձուլման: Այս ենթատեքստում եթե անդրադառնանք Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բանկային համակարգի ինտեգրման ու համագործակցության խորացման խնդիրներին, միանշանակ, ակնհայտ է, որ այս միության շրջանակներում համագործակցությունը և բանկային կապիտալում ԵՏՍ անդամ պետությունների կապիտալի մասնակցությունը ավելի մեծ դրական էֆեկտ է ապահովում, քան միջազգային կազմակերպությունների դեպքում է:

Նարինե ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

Արտասահմանյան կապիտալի արդյունավետության գնահատումը ՀՀ առևտրային բանկերում

Բանալի բառեր. բանկ, պանելային տվյալ, արդյունավետություն, չբաշխված շահույթ, բանկային կապիտալ, ակտիվներ

Գլոբալացման պայմաններում, երբ ազգային տնտեսություններն ավելի ինտեգրվում են համաշխարհային տնտեսությանը, ֆինանսական և բանկային համակարգը չի կարող անմասն մնալ այդ գործընթացին: Հայաստանի համար արդիական խնդիր է, թե արտասահմանյան կապիտալն ինչպես է օգտագործվում և թե որքանով է նպատակահարմար բանկային համակարգում ներդրումների իրականացումը: Ներկայացված հոդվածում պանելային գնահատման մեթոդով արվել են հետակա զարգացման կանխատեսումներ:

Нарине ДЕМУРЧЯН

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ИНОСТРАННОГО КАПИТАЛА В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА

Ключевые слова: банк, панельные данные, эффективность, нераспределенная прибыль, банковский капитал, активы

В условиях глобализации, когда национальные экономики все более и более интегрируют в мировую экономику, финансовая и банковская системы не могут стоять в стороне от этого процесса. Для Армении актуален вопрос насколько эффективно использование иностранного капитала и насколько целесообразно осуществление инвестиций в банковскую систему. В статье проведен анализ эффективности иностранного капитала методом панельной оценки.

Narine DEMURCHYAN

ASSESSMENT OF FOREIGN CAPITAL EFFECTIVENESS IN RA COMMERCIAL BANKS

Key words: bank, panel data, effectiveness, retained earnings, banking capital, assets

Under the conditions of globalization of the world economy, when the national economies are more and more integrated in the world economy, the financial and banking system cannot stand aloof from this process. The issue how effective is the use of the foreign capital and how advisable are the investments in the banking system of Armenia, is quite topical for small Armenia with an open economy. The effectiveness of the foreign capital has been analyzed in the presented article through the method of panel assessment, and the predictions on the further development have been made.